ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ

ԴԵՊԻ ԾՈՎ ԵԼՔ ՉՈՒՆԵՑՈՂ ԵՐԿՐՆԵՐԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

ԱՇՈՏ ՄԱՐԿՈՍՅԱՆ
ՀՀ Կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետի տեղակալ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

ԲՈՐԻՍ ԱՎԱԳՅԱՆ
«Օրբիտա» ՍՊԸ ֆինանսական վերլուծաբան, տնտեսագիտության թեկնածու

Հասարակության զարգացման գործում աշխարհագրական միջավայրն ունեցել և այժմ էլ ունի կարևոր նշանակություն: Ու թեև ժամանակին համընթաց, արտադրողական ուժերի զարգացմանը զուգահեռ, մարդը և նրա շուրջ կառուցված՝ ամենից առաջ տնտեսական հարաբերությունները հարաբերականորեն ավելի ու ավելի ինքնուրույն են դառնում, սակայն դրանք շարունակում են մնալ որպես բնության մաս և դրանից կախված համակարգ:

Տնտեսության համաշխարհայնացումը (գլոբալացումը) և տնտեսական միասնացումը (ինտեգրումը), ըստ էության, վերացնում են ազգային տնտեսությունների միջև եղած վարչական սահմանները, և աշխարհը վաղուց դարձել է ամբողջական ու միասնական տարածություն (շուկա): Ըստ այդմ՝ առանձին ընկերությունների (ձեռնարկությունների) թողարկած ապրանքները (մատուցվող ծառայությունները), դուրս գալով ազգային տնտեսությունների սահմաններից, ձեռք են բերում «հավաքական» ապրանքի (ծառայության) կարգավիճակ, և շահում են այն ընկերությունները (ձեռնարկությունները), որոնց ապրանքի (ծառայության) թողարկման և սպառողին հասցնելու ծախսերը նվազագույնն են: Այլ հավասար պայմաններում ապրանքի (ծառայության) ծախսերն այն չափանիշն են, ինչն ապահովում է տվյալ ապրանքի (ծառայության) մրցունակությունը համաշխարհային շուկայում: Այսպիսով՝ համաշխարհային շուկայում ձևավորված միջին «հավաքական» ծախսերը դառնում են այն նշաձողը, որն էլ կանխորոշում է ապրանքի (ծառայության) մրցունակության հնարավորությունը. այն ընկերությունները (ձեռնարկությունները), որոնք կապահովեն այդ նշաձողից ցածր կամ հավասար ծախսեր, կկարողանան շարունակել իրենց պայքարը

սպառողների համար, իսկ որոնք չեն կարողանա դա անել, իրենց տեղը կզիջեն մյուսներին, և վերջիններս կենթարկվեն համաշխարհային տնտեսության այս օրինաչափությանը: Ուստի ամենևին պատահական չէ, որ ամերիկյան և եվրոպական շատ ընկերություններ (ձեռնարկություններ) իրենց արտադրությունները տեղափոխում են այն պետությունների տարածքներ, որտեղ համեմատաբար քիչ ծախսերով կարելի է հասնել արտադրանքի թողարկման: Դրանով իսկ համաշխարհային տնտեսության մեջ տեղի է ունենում արտադրության գործոնների վերաբաշխում, երբ կապիտալը շարժվում է դեպի էժան աշխատուժով հարուստ պետություններ: Ներկայումս այդպիսի պետությունների դեր են կատարում Չինաստանը և Հնդկաստանը, որոնք փոշեկուլի նման դեպի իրենց են ձգում աշխարհի ինչպես ֆինանսական միջոցները (ներդրումները), այնպես էլ տեխնոլոգիայի և կառավարման առաջավոր և լավագույն եղանակներն ու մեթոդները:

Չնայած համընդհանուր դարձած վերոգրյալ միտումներին, երբ աշխարհագրական գործոններն աստիճանաբար նահանջում են, այնուհանդերձ, մինչ օրս շարունակում են մնալ և ապրանքի (ծառայության) արժեքի վրա զգալի ազդեցություն ունենալ այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են ապրանքի (ծառայության) թողարկման ծախսերը և մինչև շուկա՝ սպառողին հասցնելու փոխադրման ծախսերը: Այսինքն՝ վճռորոշ են դառնում շուկաների մերձությունը, դրանց ենթակառուցվածքների առկայությունը և հնարավորությունները, հարևանների հետ պատմականորեն ձևավորված հարաբերությունները, մշակութային և այլ փոխհարաբերություններ, որոնք էլ կանխորոշում են ապրանքը (ծառայությունը) սպառողին հասցնելու փոխադրման ձևի (օդային, ցամաքային, ծովային) ընտրությունը:

Այդ տեսանկյունից՝ ցանկացած երկրի տնտեսության զարգացման կարևոր գործոնների շարքում առանձնահատուկ նշանակություն ունի տրանսպորտային բաղկացուցիչը: Տրանսպորտի միջոցով է ապահովվում «արտադրություն-սպառում» կապը, որի առկայության դեպքում է միայն արտադրված ապրանքը (մատուցվող ծառայությունը) հասցվում սպառողին, և այդպիսով երաշխավորվում է արտադրության հետագա վերարտադրման գործընթացը: Այսինքն, վերարտադրության վերջնական՝ սպառման փուլն ապահովվում է հաղորդակցման ուղիների օգնությամբ՝ տրանսպորտի միջոցով: Մյուս կողմից՝ բուն արտադրության (ծառայությունների մատուցման) փուլը նույնպես կյանքի է կոչվում տրանսպորտի օգնությամբ, երբ այս կամ այն ապրանքի (ծառայության) թողարկման (մատուցման) համար անհրաժեշտ հումքը, հիմնական և օժանդակ նյութերը, էլեկտրաէներգիան, գազը և մյուս արտադրության միջոցները տեղ են հասցվում օդային, ջրային և ցամաքային ուղիներով՝ տրանսպորտային միջոցներով: Բացի այդ, վերարտադրության մյուս՝ բաշխման և փոխանակության փուլերն անհնար է պատկերացնել առանց տրանսպորտի: Հետևաբար՝ ցանկացած ապրանքի (ծառայության) արտադրության (մատուցման), վերարտադրության, առանց բացառության՝ բոլոր փուլերի ինչպես գոյությունը, այնպես էլ դրանց արդյունավետությունը մեծապես պայմանավորված է տրանսպորտային գործոնով:

Ապրանքի (ծառայության) թողարկման կամ մատուցման գործընթացի հաջողությունն, իր հերթին, արտադրության ժամանակ մեծապես պայմանավորված է ներարտադրական տրանսպորտով և դրա գործունեության արդյունավետությամբ: Իսկ եթե նկատի ունենանք, որ ժամանակի ընթացքում անընդհատ և որակապես բարելավվում է ներարտադրական գործընթացը՝ ի հաշիվ նոր և արդիականացված հոսքային գծերի ու միջոցների, ինչպես նաև ավտոմատ համակարգերի, ապա ակնհայտ է դառնում տրանսպորտային միջոցների վճռական և օրեցօր աճող դերը արտադրության կազմակերպման ու բարիքների (ներառյալ՝ ծառայությունները) թողարկման գործում:

Անհրաժեշտ է նաև ընդգծել տրանսպորտի կարևոր դերը ոչ միայն տվյալ երկրի սահմաններում, այլ նաև միջազգային առևտրի և հաղորդակցության ոլորտում: Ժամանակակից աշխարհում զգալիորեն մեծացել է տրանսպորտի նշանակությունը ոչ միայն օրեցօր աճող արտահանման և ներմուծման ծավալների, այլ նաև դրա արագության և արդյունավետ միջոցների (հատկապես այնպիսի, որոնց բեռնման և բեռնաթափման աշխատանքները մեքենայացված և ավտոմատացված են) շահագործման ավելացման հաշվին:

Առաջիկայում ևս, կապված համաշխարհային տնտեսության բացության մեծացման և ազգային տնտեսությունների համեմատական առավելությունների դրսևորման (խորացման) հետ, էլ ավելի է մեծանալու հաղորդակցության ենթակառուցվածքների և տրանսպորտի նշանակությունը առանձին երկրների համար:

Տնտեսության զարգացման գործում տրանսպորտի դերն էլ ավելի է կարևորվում այն երկրների համար, որոնք չունեն ծովային սահման և (կամ) ունեն որոշակի դժվարություններ (փակ սահմանների պատճառով) համաշխարհային շուկա մտնելու և այդ շուկայի առավելություններից օգտվելու առումներով: Ինչպես հայտնի է, Հայաստանի Հանրապետությունը աշխարհի այն երկրների շարքում է, որոնք ելք չունեն դեպի ծով և, սկսած 1991 թվականից, շրջափակված է իր երկու հարևանների (Թուրքիայի և Ադրբեջանի) կողմից (սահմանները փակ են):

Համաձայն միջազգային իրավունքի (ՄԱԿ-ի 1982 թ. ծովային իրավունքի կոնվենցիա, մաս X[1])՝ ներմայրցամաքային երկրներն իրավունք ունեն դուրս գալու դեպի ծով: Այդ իրավունքն իրականացվում է շահագրգիռ պետությունների միջև հատուկ համաձայնագրերի կնքման միջոցով՝ դեպի ծով ելք չունեցող և տարանցիկ (տրանզիտ) երկրների առնչությամբ:

Ներմայրցամաքային երկրները կարող են իրենց անվանումներով ունենալ ծովային նավեր, որոնք հանգրվանում են օտարերկրյա նավահանգիստներում. օրինակ՝ Չեխիայի ծովային նավերը օգտագործում են Ճչեցինա նավահանգիստը՝ Լեհաստանի հետ կնքած պայմանագրի համաձայն: Ըստ որում, բաց ծովում ներմայրցամաքային երկրներն օգտվում են բոլոր իրավունքներից հավասար հիմունքներով, ինչ որ՝ դեպի ծով ելք ունեցող երկրները, այն է՝ իրավունք ունեն իրականացնելու նավագնացություն,

[1] Տե՛ս Конвенция ООН по морскому праву от 10 декабря 1982 года, http://www.referent.ru/1/14295

ձկնորսություն, ծովի վրայով թռչող ապարատների թռիչքներ, անցկացնելու ստորջրյա մալուխներ և խողովակաշարեր:

Հետաքրքիր է, որ աշխարհում գոյություն ունեն 49 պետություններ (այդ թվում՝ չճանաչված), որոնք ելք չունեն դեպի համաշխարհային օվկիանոս: Այդ պետությունները գտնվում են չորս մայրցամաքներում. Ասիայում՝ 14, Աֆրիկայում՝ 17, Եվրոպայում՝ 16, Հարավային Ամերիկայում՝ 2: Ասիայի այդ պետություններն են՝ Հայաստանը, Ադրբեջանը[2], Աֆղանստանը, Բութանը, Ղազախստանը[2], Ղրղզստանը, Լաոսը, Մոնղոլիան, Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը (չճանաչված պետություն), Նեպալը, Տաջիկստանը, Թուրքմենիան[2], Ուզբեկստանը, Հարավային Օսեթիան (մասնակի ճանաչված պետություն), Աֆրիկայում՝ Ազավադը (չճանաչված պետություն), Բոթսվանան, Բուրկինա-Ֆասոն, Բուրունդին, Զամբիան, Զիմբաբվեն, Լեսոտոն, Մալավին, Մալին, Նիգերը, Ռուանդան, Սվազիլենդը, Ուգանդան, Կենտրոնաաֆրիկյան Հանրապետությունը, Չադը, Եթովպիան[3], Հարավային Սուդանը[4], Եվրոպայում՝ Ավստրիան, Անդորրան, Բելառուսը, Վատիկանը, Հունգարիան, Կոսովոն (մասնակի ճանաչված պետություն), Լիխտենշտեյնը, Լյուքսեմբուրգը, Մակեդոնիան, Մոլդովան, Մերձդնեստրը (չճանաչված պետություն), Սան-Մարինոն, Սերբիան, Սլովակիան, Չեխիան, Շվեյցարիան, Հարավային Ամերիկայում՝ Բոլիվիան[5] և Պարագվայը[6]:

Աղյուսակ 1-ում բերված են դեպի ծով ելք չունեցող երկրների տնտեսությունները բնութագրող հիմնական տնտեսական ցուցանիշները: Այդ տվյալների վերլուծությունից հետո կարելի է կատարել հետևյալ եզրակացությունները.

- Որպես կանոն, երկրների այս խմբի մեջ մտնող պետությունների բնակչությունը մեծաթիվ չէ. բավական է նշել, որ այդ երկրների շարքում Ասիայում ամենամեծ թվով բնակչություն ունեցողը Աֆղանստանն է (34 մլն մարդ), ամենափոքրաթիվը՝ Հայաստանը (3 մլն) և Մոնղոլիան (3 մլն), Աֆրիկայում, համապատասխանաբար՝ Եթովպիան (83 մլն) և Սվազիլենդը (1 մլն), Եվրոպայում՝ Չեխիան (11 մլն), Կոսովոն (2 մլն) և Մակեդոնիան (2 մլն), Հարավային Ամերիկայում՝ Բոլիվիան (10 մլն) և Պարագվայը (6 մլն):
- Ասիայում այդ խմբի երկրների բնակչության ընդհանուր թիվը 146 մլն է (կամ, 1 երկրի հաշվով, միջինը 13.3 մլն), Աֆրիկայում, համապատասխանաբար՝ 243 մլն (16.2 մլն), Եվրոպայում՝ 66 մլն (6.6 մլն), Հարավային Ամերիկայում՝ 16 մլն (8 մլն). ընդամենը՝ 471 մլն մարդ (12.4 մլն):

---

[2] Տվյալ երկրներն ունեն ելք դեպի Կասպից ծով, որն, ըստ էության, ջրամբար է և չունի բնական ելք դեպի համաշխարհային օվկիանոս:

[3] 1993 թվականին Էրիթրեայի անկախության հռչակումից հետո:

[4] 2011 թվականի հուլիսի 9-ին Սուդանի Հանրապետությունից Հարավային Սուդանի անկախանալուց հետո:

[5] 1879 թվականին Չիլիի կողմից Անտոֆագաստի նավահանգստի զավթումից հետո:

[6] Право государств на доступ к открытому морю, ru.wikipedia.org.

Աղյուսակ 1

Դեպի ծով ելք չունեցող երկրների հիմնական տնտեսական ցուցանիշները [7]

Մայրցամաքը և երկրները	Բնակչությունը	Տարածքի մակերեսը, հազ. կմ², 2010	Բնակչության խտությունը՝ 1 կմ² հաշվով, մարդ	Համախառն ազգային եկամուտը՝ «Ատլաս» մեթոդով		Համախառն ազգային եկամուտը՝ 1 շնչի հաշվով, «Ատլաս» մեթոդով		Համախառն ազգային եկամտի գնողունակության համարժեքը			Համախառն ներքին արդյունքը	
				մլրդ դոլար, 2010	տեղը, 2010	դոլար, 2010	տեղը, 2010	մլրդ դոլար, 2010	մեկ շնչի հաշվով, դոլար, 2010	տեղը, 2010	աճը՝ %-ով, 2009-2010	մեկ շնչի հաշվով աճը՝ %-ով, 2009-2010
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13
Ասիա												
Հայաստան	3	30	109	9.9	127	3200	135	17.5	5660	133	2.1	1.9
Ադրբեջան	9	87	110	48.3	74	5330	109	83.9	9270	108	5	3.8
Աֆղանստան	34	652	53	14.3	109	410	204	36.5	1060	199	8.2	5.2
Ղազախստան	16	2725	6	123.8	56	7580	90	175.7	10770	103	7.3	5.8
Ղրղզստան	5	200	28	4.5	157	830	181	11.3	2070	175	-1.4	-2.5
Լաոս	6	237	27	6.5	144	1050	176	15.3	2460	168	9.4	7.9
Մոնղոլիա	3	1564	2	5.2	153	1870	155	10.1	3670	152	6.4	4.7
Նեպալ	30	147	209	14.5	108	490	197	36.2	1210	194	4.6	2.7
Տաջիկստան	7	143	49	5.5	152	800	182	14.7	2140	173	3.8	2.4
Թուրքմենիա	5	488	11	19.1	103	3790	128	37.8	7490	121	9.2	7.9
Ուզբեկստան	28	447	66	36.1	83	128	162	87.7	311	161	8.5	6.7
Ընդամենը	**146**	**6720**	**22**	**287.7**	**-**	**1971**	**-**	**526.7**	**3608**	**-**	**5.7**	**4.2**

[7] Տե՛ս World Development Indicators 2012, World Bank, էջ 20-23:

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13
Աֆրիկա												
Բոթսվանա	2	582	4	13.6	113	6790	95	27.5	13700	86	7.2	5.9
Բուրկինա-Ֆասո	16	274	60	9	131	550	193	20.7	1250	190	9.2	6
Բուրունդի	8	28	326	1.4	184	170	215	3.4	400	213	3.9	1.3
Զամբիա	13	753	17	13.8	111	1070	175	17.8	1380	188	7.6	5.9
Զիմբաբվե	13	391	32	5.8	148	460	200	_	_	_	9	8.2
Մալի	15	1240	13	9.2	130	600	190	15.8	1030	201	4.5	1.4
Լեսոտո	2	30	72	2.3	174	1040	178	4.3	1960	177	3.3	2.6
Մալավի	15	118	158	4.9	156	330	211	12.7	850	207	7.1	3.8
Նիգեր	16	1267	12	5.7	149	370	208	11.2	720	210	8.8	5
Ռուանդա	11	26	431	5.5	151	520	195	12.3	1150	197	7.5	4.3
Սվազիլենդ	1	17	61	3.1	168	2950	138	5.7	5430	134	1.1	0.8
Ուգանդա	33	242	167	16.6	107	500	196	41.8	1250	190	5.2	1.9
Կենտրոնաաֆրիկ-յան Հանր.	4	623	7	2.1	177	470	199	3.5	790	209	3.3	1.4
Չադ	11	1284	9	6.9	140	620	189	13.7	1220	193	4.3	1.6
Եթովպիա	83	1104	83	32.4	85	390	207	86.1	1040	200	10.1	7.8
Ընդամենը	**243**	**7979**	**30**	**132.3**	**_**	**544**	**_**	**276.5**	**1138**	**_**	**6.14**	**3.86**

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13
Եվրոպա												
Ավստրիա	8	84	102	394.6	25	47030	18	333.9	39790	24	2.3	2
Բելառուս	9	208	47	56.5	67	5950	104	129	13590	88	7.6	7.8
Հունգարիա	10	93	110	128.6	53	12860	69	195.5	19550	69	1.3	1.5
Կոսովո	2	11	167	6	147	3290	132	_	_	_	4	3.4
Մակեդոնիա	2	26	82	9.4	128	4570	115	22.5	10920	100	1.8	1.6
Մոլդովա	4	34	124	6.5	145	1810	158	12	3360	159	6.9	7.1
Սերբիա	7	88	83	41	78	5630	106	80.8	11090	97	1	1.4
Սլովակիա	5	49	113	91.5	60	16840	60	124.8	22980	62	4.2	4
Չեխիա	11	79	136	188.3	43	17890	59	241	22910	63	2.3	2
Շվեյցարիա	8	41	196	559.7	19	71520	7	391	49960	14	2.7	1.6
Ընդամենը	**66**	**713**	**93**	**1482.1**	**_**	**22456**	**_**	**1530.5**	**23189**	**_**	**3.41**	**3.24**
Հարավային Ամերիկա												
Բոլիվիա	10	1099	9	17.9	104	1810	158	46	4640	142	4.1	2.5
Պարագվայ	6	407	16	17.6	106	2720	144	32.8	5080	137	15	13
Ընդամենը	**16**	**1506**	**11**	**35.5**	**_**	**2219**	**_**	**3139.8**	**4860**	**_**	**9.55**	**7.75**
Ընդամենը դեպի ծով ելք չունեցող երկրներ*	**471**	**16918**	**28**	**1938**	**_**	**4114**	**_**	**5457**	**3202**	**_**	**6**	**5**

* Դեպի ծով ելք չունեցող մյուս երկրների վերաբերյալ տվյալները բացակայում են:

➢ Դեպի ծով ելք չունեցող երկրների բնակչությունը (471 մլն) աշխարհի բնակչության (6895 մլն մարդ) 6.8%-ն է կազմում, իսկ տարածքի ընդհանուր մակերեսը (16918 հազ. կմ^2)՝ աշխարհի երկրների տարածքի մակերեսի (134222 հազ. կմ^2) 12.6%-ը: Փաստորեն, բնակչության խտությունը, 1 կմ^2 հաշվով, դեպի ծով ելք չունեցող երկրներում (28 մարդ) գրեթե 2 անգամ ցածր է աշխարհի միջին ցուցանիշից (53 մարդ): Այլ կերպ ասած՝ այդ խմբի երկրների բնակչությունն ինչ-ինչ պատճառներով գերադասում է ապրել այլ տարածքներում (երկրներում):

➢ Ըստ մայրցամաքների՝ բնակչության խտության ցուցանիշների ուսումնասիրությունը վկայում է, որ այդ խմբի երկրներում ամենախիտ բնակեցված է Եվրոպան (1 կմ^2 հաշվով՝ 93 մարդ), ապա Աֆրիկան (30 մարդ), Ասիան (22 մարդ) և Հարավային Ամերիկան (11 մարդ):

➢ Ըստ երկրների՝ բնակչության խտության ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է Ռուանդայում (431 մարդ), Բուրունդիում (326 մարդ), Նեպալում (209 մարդ), Շվեյցարիայում (196 մարդ), Կոսովոյում (167 մարդ): Աղյուսակ 1-ում բերված՝ դեպի ծով ելք չունեցող 38 երկրներից 14-ը, 1 կմ^2 հաշվով, ունեն մինչև 100 մարդ/խտություն, իսկ 24-ում դիտվել է 100 մարդուց պակաս խտություն: Ըստ որում, բնակչության ամենացածր խտությունը Մոնղոլիայում է (2 մարդ): Նշված խումբ երկրների շարքում Հայաստանի ցուցանիշը (109 մարդ) բարձրերից մեկն է, քանի որ Ասիայի նույն խմբի երկրների ցուցանիշը (22) գերազանցում է շուրջ 5 անգամ, իսկ դեպի ծով ելք չունեցող երկրների միջին ցուցանիշը (28)՝ շուրջ 4 անգամ: Ըստ այսմ, կարծում ենք, աշխարհագրական նշված հանգամանքը լուրջ դերակատարում ունի տնտեսության կազմակերպման և զարգացման գործում ոչ միայն ներքին քաղաքականության առումով, այլև, ավելի շուտ, արտաքին:

➢ «Ատլաս» մեթոդով հաշվարկված համախառն ազգային եկամտի (ՀԱԵ) ցուցանիշների ուսումնասիրությունից հետևում է, որ դեպի ծով ելք չունեցող՝ աղյուսակ 1-ում բերված Ասիայի երկրների գումարային ՀԱԵ-ն (287.7 մլրդ դոլար) կազմել է աշխարհի նույն ցուցանիշի 0.5%-ը, Աֆրիկայի երկրներինը (132.3 մլրդ դոլար)՝ 0.2%-ը, Եվրոպայի երկրներինը (1482.1 մլրդ դոլար)՝ 2.4%-ը, Հարավային Ամերիկայի երկրներինը (35.5 մլրդ դոլար)՝ 0.06%-ը. ընդամենը (1938 մլրդ դոլար)՝ 3.1%-ը:

➢ Համախառն ազգային եկամտի ցուցանիշով («Ատլաս» մեթոդով հաշվարկված) դեպի ծով ելք չունեցող երկրները աշխարհի երկրների շարքում Ասիայում զբաղեցնում են 56-157-րդ տեղերը: Ըստ որում, 56-րդ տեղ զբաղեցնող Ղազախստանը, 74-րդ տեղ զբաղեցնող Ադրբեջանը և 83-րդ տեղում գտնվող Ուզբեկստանը, ի տարբերություն այդ մայրցամաքում գտնվող և դեպի ծով ելք չունեցող մյուս երկրների, զբաղեցնում են մինչև 100-րդ տեղը, մինչդեռ մյուս երկրները՝ 100-րդ տեղից հետո երկրների շարքը: Աֆրիկայում միայն Եթովպիան է, որ զբաղեցնում է մինչև 100-րդ տեղը (85-րդը), մնացած բոլոր երկրները տեղեր են զբաղեցրել 107-184-րդ շարքերում: Հարավային Ամերիկայում գտնվող՝ դեպի ծով ելք չունեցող երկրներից երկուսը, վերը նշված ցուցանիշով, զբաղեցնում են 104-րդ (Բոլիվիա) և 106-րդ (Պարագվայ) տեղերը: Այլ է պատկերը Եվրոպայում: Այս խմբում գտնվող երկրների տեղերը սկսվում են 19-րդից (Շվեյցարիա) և

ավարտվում 147-րդով (Կոսովո): Սակայն ակնհայտ է, որ այս խմբում ընդգրկված 10 պետություններից 7-ը զբաղեցնում են մինչև 100-րդ տեղերը: Աղյուսակ 1-ում բերված 38 պետություններից միայն 11-ն են համախառն ազգային եկամտի ցուցանիշով («Ատլաս» մեթոդով հաշվարկված) զբաղեցնում մինչև 100-րդ տեղը, մնացած 27-ը տեղ են գրավել 100-րդ տողից ցածր:

➢ «Ատլաս» մեթոդով հաշվարկված՝ մեկ շնչի հաշվով համախառն ազգային եկամտի մեծությունը Ասիայի դեպի ծով ելք չունեցող երկրներում տատանվում է 128 դոլարից (Ուզբեկստան) մինչև 7580 դոլարի (Ղազախստան) միջակայքում: Այս խմբի միջինը կազմում է 1971 դոլար, ինչը աշխարհի միջին ցուցանիշից (9.069 դոլար) ցածր է 4.6 անգամ: Աֆրիկայում այդ ցուցանիշները կազմել են համապատասխանաբար՝ 170 դոլար (Բուրունդի), 6790 դոլար (Բոթսվանա), 544 դոլար և 16.7 անգամ, Եվրոպայում՝ 1810 դոլար (Մոլդովա), 71520 դոլար (Շվեյցարիա), 22456 դոլար և բարձր է եղել 2.5 անգամ, Հարավային Ամերիկայում՝ 1810 դոլար (Բոլիվիա), 2720 (Պարագվայ), 2219 դոլար և ցածր է եղել ավելի քան 4 անգամ: Կատարված վերլուծությունը վկայում է, որ թեև բերված երկրները ելք չունեն դեպի ծով, սակայն կարևորվում է, թե որ մայրցամաքում է գտնվում տվյալ պետությունը: Այսպես՝ Եվրոպայում գտնվող այդ խմբի երկրներում «Ատլաս» մեթոդով հաշվարկված՝ 1 շնչի հաշվով համախառն ազգային եկամտի ցուցանիշը Ասիայում գտնվող նույն խմբի միջին ցուցանիշը գերազանցում է ավելի քան 11 անգամ, Աֆրիկայի երկրների համեմատությամբ՝ ավելի քան 41 անգամ, Հարավային Ամերիկայում գտնվող երկրների համեմատությամբ՝ ավելի քան 10 անգամ: Այժմ դիտարկենք, թե ինչի շնորհիվ է այդ հաջողությունը:

Այս հարցը կարող է ունենալ շատ տարբեր պատասխաններ, հետևաբար՝ դրանցից ոչ մեկն էլ միակը չէ. ճիշտ կարող է համարվել դրանց համակցությունը: Ակնհայտ է, որ Եվրոպայում դեպի ծով ելք չունեցող երկրների խմբի բարձր տնտեսական ցուցանիշները պայմանավորված են, առաջին հերթին, այդ երկրների տնտեսությունների կառավարման մոդելներով և դրանց բարձր արդյունավետությամբ, ինչը, բնականաբար, չի նկատվում ո՛չ Ասիայում, ո՛չ Աֆրիկայում և ո՛չ էլ Հարավային Ամերիկայում գտնվող երկրների համանման խմբերում: Պակաս կարևոր չէ նաև հարևանների հանգամանքը, որը բարենպաստ միջավայր է ձևավորում տարածաշրջանային համագործակցության համար: Ասվածի լավագույն օրինակ կարող է համարվել, դիցուք՝ Ավստրիան, որի արտահանման ծավալի մեջ հարևանների բաժինը 2005 թվականին կազմել է 54.6%, 2010 թ.՝ 52.7%, ներմուծմանը, համապատասխանաբար՝ 60.3% և 59.5%: Սա կարող ենք անվանել «լավ հարևանի» էֆեկտ: Իսկ, օրինակ՝ Հայաստանի Հանրապետության դեպքում այդ ցուցանիշները կազմել են համապատասխանաբար՝ 6.8% և 11.8%՝ 2005 թ., 9% և 13.3%՝ 2010 թ.: Սա էլ կարող ենք անվանել «վատ հարևանի» էֆեկտ: Պետք է նշել, որ ամենևին նշանակություն չունի, թե հատկապես «վատ հարևանի» դեպքում «մեղքն» ումն է՝ մեկ կողմինը, թե կողմերից մի քանիսինը: Փաստն այն է, որ դեպի ծով ելք չունեցող երկրների համագործակցությունը հատկապես առևտրի, կապիտալի և տեխնոլոգիաների, ինչպես նաև աշխատուժի արտահանման և ներմուծման

մասով տուժում է, որի հետևանքը լինում է այդպիսի համագործակցության արդյունավետության կորուստը կողմերի համար: Իսկ երբ նշվում են տարբեր տեսակի, հատկապես քաղաքական բնույթի պատճառներ տարածաշրջանային համագործակցության չկայացման հիմնավորման կապակցությամբ, ապա, կարծում ենք՝ դրանք կարճաժամկետ են, քանի որ, ինչպես ցույց է տալիս մարդկային հասարակության անցած հազարամյա պատմությունը, տարբեր տեսակի և ժամանակահատվածների քաղաքական առճակատումները՝ նույնիսկ պատերազմները, մի օր ավարտվում են՝ իրենց տեղը զիջելով բարիդրացիական և փոխշահավետ առևտրատնտեսական հարաբերություններին:

➢ Մեկ շնչի հաշվով համախառն ազգային եկամտի՝ գնողունակության համարժեքով կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ Ասիայի, Աֆրիկայի (միակ բացառությունը Բոթսվանան է) և Հարավային Ամերիկայի՝ դեպի ծով ելք չունեցող երկրները գտնվում են 100-յակից ներքև ձևավորված շարքերում: Այսպես՝ Ասիայում գտնվող այդ խմբի երկրների վերը նշված միջին ցուցանիշը (3608 դոլար) աշխարհի ցուցանիշից (11066 դոլար) ցածր է ավելի քան 3 անգամ, Աֆրիկայում գտնվող երկրներինը (1138 դոլար)՝ շուրջ 10 անգամ, Հարավային Ամերիկայում գտնվող երկրներինը (4860)՝ շուրջ 2.3 անգամ: Մինչդեռ Եվրոպայում գտնվող նման երկրների ցուցանիշը (23189 դոլար) ավելի քան 2 անգամ գերազանցում է աշխարհի միջին ցուցանիշը:

Աշխարհի և ըստ եկամուտների դասակարգված առանձին խումբ երկրների հիմնական տնտեսական ցուցանիշները վկայում են, որ 2010 թ. աշխարհի բնակչության 11.6%-ը բնակվել է ցածր եկամտով երկրներում, 72.1%-ը՝ միջին եկամտով երկրներում (36.5%-ը՝ միջինից ցածր եկամուտ ունեցող, իսկ 35.6%-ը՝ միջինից բարձր եկամուտ ունեցող), 16.3%-ը՝ բարձր եկամտով երկրներում:

Հետաքրքիր է նաև նշել, որ աշխարհի տարածքի 11.6%-ը բաժին է ընկել ցածր եկամուտ ունեցող երկրներին, 61.8%-ը՝ միջին եկամտով երկրներին (որից 17.6%-ը՝ միջինից ցածր եկամուտ ունեցող, իսկ 44.2%-ը՝ միջինից բարձր եկամուտ ունեցող), 26.6%-ը՝ բարձր եկամտով երկրներին: Ինչպես տեսնում ենք, այլ հավասար պայմաններում, բարձր եկամուտ ունեցող երկրների տարածքների ավելի մեծ չափերը նպաստել են բարձր եկամտով երկրների զարգացմանը: Ցածր եկամտով երկրներում բնակչության խտությունը (53 մարդ՝ 1 կմ^2 հաշվով) համընկել է աշխարհի բնակչության միջին խտությանը, իսկ միջին եկամտով երկրներում այդ ցուցանիշը աշխարհի միջին ցուցանիշը գերազանցում է շուրջ 17%-ով (ըստ որում, միջինից ցածր եկամուտ ունեցող երկրներում այդ ցուցանիշը գերազանցում է ավելի քան 2 անգամ, իսկ միջինից բարձր եկամուտ ունեցող երկրներում 20.8%-ով ավելի ցածր է աշխարհի բնակչության միջին խտությունից), բարձր եկամտով երկրներում բնակչության միջին խտությունը աշխարհի միջինից ցածր է 37.7 %-ով:

Ցածր եկամտով երկրներին բաժին է ընկել համաշխարհային համախառն ազգային եկամտի ընդամենը 0.67%-ը, միջին եկամտով երկրներին՝ 29.60% (ըստ որում, միջինից ցածր եկամտով երկրներին՝ 6.5%-ը, միջինից

բարձր եկամուտ ունեցող երկրներին՝ 23.1%-ը), բարձր եկամտով երկրներին՝ 69.73%-ը: Այդ պատճառով էլ բնակչության 1 շնչի հաշվով համախառն ազգային եկամտի ցուցանիշը ցածր եկամտով երկրներում աշխարհի միջին ցուցանիշից ցածր է 17.2 անգամ, միջին եկամտով երկրներում՝ 2.4 անգամ (ըստ որում, միջինից ցածր եկամուտ ունեցող երկրներում՝ 5.6 անգամ, իսկ միջինից բարձր եկամուտ ունեցող երկրներում՝ ավելի քան 1.5 անգամ), բարձր եկամտով երկրներում այդ ցուցանիշը աշխարհի միջինը գերազանցել է շուրջ 4.3 անգամ:

Աշխարհի երկրների առանձին խմբերի միջև եկամուտների տարբերությունների մեղմման հիմնական ուղին ցածր և միջին եկամտով երկրների՝ բարձր եկամտով երկրների խմբի համեմատությամբ ՀՆԱ աճի ավելի բարձր ցուցանիշների ապահովումն է: Տվյալների վերլուծությունից երևում է, որ 2009-2010 թվականներին ՀՆԱ աճի տեմպը եթե աշխարհում կազմել է 4.2%, ապա ցածր եկամտով երկրներում՝ 5.9%, միջին եկամտով երկրներում՝ 7.6%, բարձր եկամտով երկրներում՝ 3.1%, իսկ բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ աճի ցուցանիշը, համապատասխանաբար՝ 3.0%, 3.7%, 6.4%, և 2.5%: Բերված համեմատական վերլուծությունը վկայում է, որ ՀՆԱ աճի տեմպի նման շարժի (դինամիկայի) դեպքում դեռևս երկար ժամանակահատված կպահանջվի եղած էական տարբերությունների մոտարկման համար:

Աղյուսակ 2

Դեպի ծով ելք չունեցող երկրների ըստ եկամուտների և աշխարհի համանման ցուցանիշների համեմատականը [8]

Աշխարհի երկրների դասակարգումն ըստ տարեկան եկամտի	Աշխարհի երկրներ		Դեպի ծով ելք չունեցող երկրներ		
	թիվը	թվի նկատմամբ, %	թիվը	թվի նկատմամբ, %	աշխարհի երկրների թվի նկատմամբ, %
Ցածր եկամուտ ունեցող (1005 դոլարից պակաս)	35	16.2	15	34.8	42.9
Միջին եկամուտ ունեցող (1006 դոլարից մինչև 12275 դոլար)	111	51.4	20	46.6	18.0
Այդ թվում ՝ միջինից ցածր եկամուտ ունեցող (1006 դոլարից մինչև 3975 դոլար)	57	26.4	14	32.6	24.6
Միջինից բարձր եկամուտ ունեցող (3976 դոլարից մինչև 12275 դոլար)	54	25.0	6	14.0	11.1
Բարձր եկամուտ ունեցող (12276 դոլարից ավելի)	70	32.4	8	18.6	11.4
Ընդամենը	**216**	**100**	**43**	**100**	**19.9**

[8] Տե՛ս World Development Indicators 2012, World Bank, էջ 1-2:

Աղյուսակ 2-ի տվյալներից հետևում է, որ դեպի ծով ելք չունեցող երկրները կազմում են աշխարհի ցածր եկամուտ ունեցող երկրների թվի 42.9%-ը, միջին եկամուտ ունեցող երկրների թվի 18.0%-ը և բարձր եկամուտ ունեցող երկրների թվի 11.4%-ը: Այսինքն՝ այլ հավասար պայմաններում, դեպի ծով ելք չունեցող երկրների բաժինը աշխարհի՝ ըստ եկամուտների դասակարգված երկրների աճողական խմբերում նվազում է, իսկ դա նշանակում է՝ եթե երկիրը դեպի համաշխարհային օվկիանոս ելք չունի, ապա նվազում են նրա հնարավորությունները՝ հայտնվելու ավելի բարձր եկամուտ ունեցող երկրների խմբում: Այսպիսի բնական «անարդարությունը» վերացնելու նպատակով աշխարհի երկրների մեծ մասը (պետությունների թվի շուրջ 80%-ը) պետք է հնարավորություն տա «փոքրամասնություն» կազմող երկրներին՝ զարգանալու ծով ելք ունեցող երկրների հետ հավասար պայմաններում:

Աղյուսակ 3-ում ներկայացված են դեպի ծով ելք չունեցող և ըստ բնակչության եկամուտների առանձին խմբերի դասակարգված երկրների արտադրանքի աճի վերաբերյալ 1990-2000, 2000-2010 թվականների տվյալները:

Եթե 1990-2000 թվականներին ՀՆԱ միջին տարեկան աճի տեմպը աշխարհում կազմել է 2.9%, ապա դեպի ծով ելք չունեցող երկրներում այդ ցուցանիշը 0.72% է, ինչը 4 անգամ ցածր է աշխարհի միջին ցուցանիշից: Ըստ որում, դեպի ծով ելք չունեցող երկրների ՀՆԱ նման ցածր ցուցանիշի վրա իրենց էական ազդեցությունն են թողել Ասիայում (-1.96%) և Եվրոպայում (-1.11%) գտնվող այդ խմբի երկրների միջին ցուցանիշները: Կարևոր է նաև ընդգծել, որ ինչպես ցածր, այնպես էլ միջին եկամտով երկրներում ՀՆԱ միջին տարեկան աճի ցուցանիշն ավելի բարձր է եղել, քան աշխարհի ցուցանիշը: 2000-2010 թվականներին պատկերն էապես փոխվել է. դեպի ծով ելք չունեցող երկրներում ՀՆԱ միջին տարեկան ցուցանիշը գրեթե երկու անգամ ավելի բարձր է եղել, քան աշխարհի համապատասխան ցուցանիշը: Ցածր եկամտով երկրներում ՀՆԱ միջին տարեկան աճը ավելի քան երկու անգամ, իսկ միջին եկամտով երկրներում՝ շուրջ 2.4 անգամ ավելի բարձր է եղել աշխարհի ցուցանիշից, մինչդեռ բարձր եկամտով երկրներում ՀՆԱ միջին տարեկան աճի ցուցանիշն ավելի քան 2 անգամ ցածր է եղել աշխարհի ցուցանիշից: Դեպի ծով ելք չունեցող երկրների ՀՆԱ միջին տարեկան ցուցանիշի աճին էապես նպաստել է Ասիայի՝ դեպի ծով ելք չունեցող երկրների ՀՆԱ զգալի աճը (8.89%):

Դեպի ծով ելք չունեցող երկրների գյուղատնտեսության միջին տարեկան աճը (0.74%) 1990-2000 թվականներին նույնպես զգալիորեն (շուրջ 3 անգամ) ցածր է եղել է աշխարհի ցուցանիշից, իսկ հաջորդ տասնամյակում այն որոշ չափով (0.37 տոկոսային կետով) գերազանցել է աշխարհի համապատասխան ցուցանիշը: Ըստ որում, Ասիայի՝ դեպի ծով ելք չունեցող երկրներում գյուղատնտեսության միջին տարեկան աճը 1990-2000 թվականներին կազմել է 5.28%, ինչը գյուղատնտեսության ոլորտում բավականաչափ բարձր ցուցանիշ է:

Աղյուսակ 3

Դեպի ծով ելք չունեցող և ըստ բնակչության եկամուտների առանձին խմբերի դասակարգված աշխարհի երկրների արտադրանքի աճը

Մայրցամաքը և երկրները, եկամտային խմբերը և աշխարհի տարածաշրջանները	Համախառն ներքին արդյունքի միջին տարեկան աճը, %		Գյուղատնտեսության միջին տարեկան աճը, %		Արդյունաբերության միջին տարեկան աճը, %		Վերամշակող արդյունաբերության միջին տարեկան աճը, %		Ծառայությունների միջին տարեկան աճը, %	
	1990-2000	2000-2010	1990-2000	2000-2010	1990-2000	2000-2010	1990-2000	2000-2010	1990-2000	2000-2010
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
Ասիա										
Հայաստան	-1.9	9.2	0.5	6.0	-7.4	9.2	-4.3	5.8	6.7	10.4
Ադրբեջան	-6.3	17.1	-1.7	4.7	-2.1	22.4	-15.7	8.3	-1.6	14.5
Աֆղանստան	-	11.3	-	6.3	-	14.5	-	9.5	-	14.2
Ղազախստան	-4.1	8.3	-8.0	3.8	-8.6	9.0	-	6.3	1.1	8.3
Ղրղզստան	-4.1	4.4	1.5	0.0	-10.3	1.1	-7.5	-0.6	-5.2	10.9
Լաոս	6.4	7.2	4.8	3.4	11.1	13.1	11.7	-0.2	6.6	7.3
Մոնղոլիա	1.0	7.2	0.3	4.6	1.5	5.8	-6.6	6.1	-0.9	8.9
Նեպալ	4.9	3.8	2.5	3.2	7.1	2.5	8.9	0.7	6.2	4.4
Տաջիկստան	10.4	8.6	-6.8	7.4	-11.4	8.9	-12.6	8.2	-10.8	7.2
Թուրքմենիա	-4.9	13.6	-4.7	12.3	-2.7	20.2	-	-	-5.8	21.8
Ուզբեկստան	-0.2	7.1	0.5	6.4	-3.4	5.0	0.7	2.6	0.4	9.0
Մայրցամաքի միջինը*	**-1.96**	**8.89**	**-0.94**	**5.28**	**-2.62**	**10.15**	**-3.18**	**4.67**	**-0.33**	**10.63**
Աֆրիկա										
Բոթսվանա	5.7	4.1	-0.7	0.9	5.4	3.2	3.5	5.1	7.5	4.7
Բուրկինա-Ֆասո	5.5	5.5	5.9	6.2	5.9	7.3	5.9	6.3	3.9	5.5
Բուրունդի	-2.9	3.2	-1.9	-1.5	-4.3	-6.2	-	-	-2.8	10.4
Զամբիա	0.5	5.6	4.2	1.1	-4.2	9.4	0.8	5.1	2.5	5.5

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
Զիմբաբվե	2.3	-6.0	4.3	-9.6	0.4	-4.9	0.4	-5.9	3.0	-4.2
Լեսոտո	4.0	3.5	2.8	-1.9	5.5	3.4	7.9	4.7	4.5	3.8
Մալավի	3.7	5.2	8.6	2.9	2.0	6.2	0.5	5.7	1.6	6.5
Մալի	4.1	5.2	2.6	4.8	6.4	4.5	-1.4	5.1	3.0	6.5
Նիգեր	2.4	4.2	3.0	-	2.0	-	2.6	-	1.9	-
Ռուանդա	-0.2	7.6	2.5	-	-3.8	-	-5.8	-	-0.9	-
Սվազիլենդ	3.4	2.4	0.9	1.4	3.2	1.7	2.8	1.8	3.9	3.4
Ուգանդա	7.0	7.7	3.4	2.2	12.3	9.2	14.2	6.8	8.2	8.4
Կենտրոնաաֆրիկյան Հանրապետություն	2.0	1.0	3.8	0.3	0.7	-0.4	-0.2	-0.1	0.2	-2.5
Չադ	2.2	9.0	4.9	-	0.6	-	-	-	0.8	-
Մայրցամաքի միջինը	**2.84**	**4.16**	**3.16**	**0.62**	**2.29**	**3.04**	**2.60**	**3.46**	**2.66**	**4.36**
Եվրոպա										
Ավստրիա	2.5	1.8	-0.1	1.3	2.5	2.0	2.5	2.6	2.7	2.0
Բելառուս	-1.6	8.0	-4.0	5.5	-1.8	12.0	-0.7	10.7	-0.4	5.4
Հունգարիա	1.0	2.2	-1.9	3.4	3.7	2.1	7.9	3.4	0.5	2.1
Կոսովո	-	5.3	-	-	-	-	-	-	-	-
Մակեդոնիա	-0.8	3.3	0.2	1.9	-2.3	3.3	-5.3	1.9	0.5	3.6
Մոլդովա	-9.6	5.2	-11.2	-0.9	-13.6	-1.7	-7.1	1.0	0.7	10.1
Սերբիա	-4.2	4.1	-	1.1	-	2.0	-	-	-	5.4
Սլովակիա	2.7	3.3	0.4	-0.6	1.6	3.3	1.8	3.2	3.0	3.6
Չեխիա	1.1	3.8	0.0	0.4	0.2	5.5	4.3	6.9	1.2	3.2
Մայրցամաքի միջինը	**-1.11**	**4.11**	**-2.37**	**1.51**	**-1.39**	**3.56**	**0.49**	**4.24**	**1.17**	**4.43**
Հարավային Ամերիկա										
Բոլիվիա	4.0	4.1	2.9	2.9	4.1	5.4	3.8	4.4	4.3	3.1
Պարագվայ	2.2	3.8	3.3	5.2	0.6	2.1	1.4	1.3	2.5	3.8
Մայրցամաքի միջինը	**3.1**	**3.95**	**3.1**	**4.05**	**2.35**	**3.75**	**2.6**	**2.85**	**3.4**	**3.45**

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
Դեպի ծով ելք չունեցող երկրների միջինը	**0.72**	**5.28**	**0.74**	**2.87**	**0.16**	**5.13**	**0.63**	**3.81**	**1.73**	**5.72**
Աշխարհի միջինը	**2.9**	**2.7**	**2.0**	**2.5**	**2.4**	**2.5**	**-**	**-3.1**	**3.1**	**2.8**
Ցածր եկամտով երկրներ	**3.0**	**5.5**	**2.9**	**3.7**	**3.6**	**7.2**	**3.6**	**6.6**	**2.8**	**6.1**
Միջին եկամտով երկրներ	**3.9**	**6.4**	**2.4**	**3.5**	**4.4**	**7.2**	**6.2**	**7.5**	**4.0**	**6.6**
Միջինից ցածր եկամտով երկրներ	3.8	6.3	2.6	3.3	4.1	6.0	4.7	6.3	4.5	7.6
Միջինից բարձր եկամտով երկրներ	3.9	6.5	2.3	3.6	4.5	7.5	6.5	7.8	3.9	6.4
Ցածր և միջին եկամտով երկրներ	**3.9**	**6.4**	**2.4**	**3.5**	**4.4**	**7.2**	**6.2**	**7.5**	**4.0**	**6.6**
Արևելյան Ասիա և Խաղաղ օվկիանոս	8.5	9.4	3.4	4.1	10.9	10.2	1.09	10.1	8.4	10.0
Եվրոպա և Կենտրոնական Ասիա	-1.8	5.4	-2.1	2.7	-4.4	5.4	-	-	-1.2	5.9
Լատինական Ամերիկա և Կարիբներ	3.2	3.8	2.0	2.9	3.0	3.1	2.9	2.8	3.5	4.0
Միջին Արևելք և Հյուսիսային Աֆրիկա	3.8	4.7	2.9	4.6	4.1	3.5	4.3	5.4	3.3	5.1
Հարավային Ասիա	5.5	7.4	3.3	3.1	6.0	8.1	6.4	8.4	6.9	8.8
Մերձսահարյան Աֆրիկա	2.5	5.0	3.2	3.2	1.9	4.9	2.2	3.4	2.6	4.8
Բարձր եկամտով երկրներ	**2.7**	**1.8**	**1.5**	**0.7**	**1.9**	**0.7**	**-**	**1.9**	**3.0**	**2.1**
Եվրոգոտի	2.0	1.3	1.6	0.2	1.0	0.4	1.2	0.3	2.4	1.8

* Տվյալ մայրցամաքի երկրների ցուցանիշների միջին թվաբանականը:

** Մայրցամաքների ցուցանիշների միջին թվաբանականը:

Աղբյուրը՝ կազմվել և հաշվարկվել է World Development Indicators 2012, WB, էջ 214-216-ի տվյալների հիման վրա:

Հատկապես արդյունաբերության ոլորտի մասով 1990-2000 թվականները դեպի ծով ելք չունեցող երկրներում եղել են կորսված տարիներ, քանի որ այդ ժամանակահատվածում այստեղ արդյունաբերության միջին տարեկան աճի տեմպերը աշխարհի ցուցանիշից 15 անգամ ավելի ցածր են: Արդյունաբերական արտադրանքի զգալի անկում (միջին տարեկան՝ -2.62%) է գրանցվել 1990-2000 թվականներին Ասիայի տվյալ խմբի երկրներում: Ըստ որում, Հայաստանում այդ ցուցանիշը եղել է բավական բարձր՝ այդ երկրների միջին տարեկան անկման ցուցանիշը գերազանցելով շուրջ 3 անգամ:

Ի տարբերություն նախորդ տասնամյակի, 2000-2010 թվականներին նկատվել է դեպի ծով ելք չունեցող երկրների արդյունաբերության միջին տարեկան աճի՝ աշխարհի համապատասխան ցուցանիշից 2 անգամից ավելի առաջանցիկ աճ (2.5%): Այս իմաստով մեծ է եղել Ասիայի՝ դեպի ծով ելք չունեցող երկրների ավանդը, քանի որ նշված ժամանակահատվածում այստեղ նկատվել է արդյունաբերական արտադրանքի երկնիշ (10.15%) միջին տարեկան աճ: Հարկ է նկատել, որ 1990-2000 թվականներին ինչպես վերամշակող արդյունաբերության, այնպես էլ ծառայությունների միջին տարեկան աճի տեմպերը Ասիայի այդ երկրներում ունեցել են բացասական նշան, համապատասխանաբար՝ -3.18% և -0.33%: Եթե նկատենք, որ Ասիայում գտնվող 11 պետություններից 7-ը նախկին Խորհրդային Միության հանրապետություններն են, որոնք, «հրաժարվելով» սոցիալիզմից, բռնեցին շուկայական հարաբերությունների կառուցման ճանապարհը հենց 1990-ական թվականներին, ապա պարզ կդառնա, որ այդ անցման թե՛ տնտեսական և թե՛ սոցիալական գինն արտադրության և ծառայությունների ոլորտներում նման բարձր տեմպերով անկումներն էին, որոնք հաջողությամբ հաղթահարվեցին և ապահովեցին աճի բարձր տնտեսական տեմպեր հաջորդ տասնամյակում:

Համեմատության համար ուսումնասիրվել են նաև Տնտեսական համագործակցության զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) երկրների արտադրանքի աճի ցուցանիշները[9]: Նշված տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ՏՀԶԿ երկրներում ՀՆԱ միջին տարեկան աճի տեմպերը եղել են կայուն և՛ 1990-2000, և՛ 2000-2010 թվականներին, միմյանցից, ըստ էության, չեն տարբերվել (ավելի ստույգ լինելու համար նշենք, որ 2000-2010 թվականներին նշված ցուցանիշը 1990-2000 թվականների ցուցանիշից պակաս է եղել միայն 0.02 տոկոսային կետով), ինչը այս երկրների սոցիալ-տնտեսական համակարգի բարձր կենսունակության և տնտեսության դինամիզմի լավագույն բնութագիրն է: Ասվածը վերաբերում է ամբողջ արդյունաբերությանը, ինչպես նաև վերամշակող արդյունաբերությանը և ծառայությունների ոլորտին: Ինչ վերաբերում է գյուղատնտեսության միջին տարեկան աճի ցուցանիշների էական տարբերությանը (2000-2010 թվականներին շուրջ 2.5 անգամ ավելի բարձր է եղել, քան 1990-2000 թվականներին), ապա դա բացատրվում է բնակլիմայական պայմաններով, ինչից չեն կարող ապահովված լինել աշխարհի նույնիսկ ամենազարգացած տնտե-

[9] Տե՛ս World Development Indicators 2012, World Bank, էջ 66-67:

սությունները: Հետաքրքիր է նաև, որ ՏՀԶԿ երկրների ցանկում տեղ է գտել դեպի ծով ելք չունեցող նախկին համայնավարական 3 երկիր ևս՝ Չեխիան, Հունգարիան և Սլովակիան, որոնց արտադրանքի աճի ցուցանիշները նշված բոլոր ոլորտներում ինչպես 1990-2000, այնպես էլ 2000-2010 թվականներին ունեցել են աճի դրական ցուցանիշներ (միակ բացառությունը, թերևս, գրանցվել է Հունգարիայում, որի գյուղատնտեսության միջին տարեկան աճը 1990-2000 թվականներին ունեցել է բացասական նշան (-1.9%): Համաշխարհային բանկի վիճակագրությամբ՝ բերված 31 պետություններից միայն 4-ը չունեն ելք դեպի ծով, ինչն էլ իր կարևոր ազդեցությունն է ունեցել այդ երկրների զարգացման աճի տեմպերի և համամասնությունների վրա:

Թեև Հայաստանում արտաքին առևտրի ռեժիմը բավական ազատական է, երկրում առկա են լուրջ խնդիրներ՝ կապված մաքսային վարչարարության հետ, ինչը երկարատև և ծախսատար է դարձնում թե՛ ներմուծման, թե՛ արտահանման գործընթացները՝ սահմանափակելով արտաքին առևտրի ազատականացումից օգուտների ստացման հնարավորությունները: Արտաքին առևտրի ազատականացման տնտեսական ներգործությունը չափազանց թույլ է բարձր տրանսպորտային ծախսերի և արհեստականորեն բարդացված մաքսային ընթացակարգերի առկայության պայմաններում: Այդ առումով, կարևորվում է Հայաստանի անդամակցումը միջազգային բեռնափոխադրումների սահմանային մաքսային ընթացակարգերի պարզեցմանն ուղղված տրանսպորտային համաձայնագրերին (կոնվենցիաներին):

Մեր ուսումնասիրության արդյունքներից հետևում է, որ դեպի ծով ելք չունեցող երկրների լրացուցիչ դժվարությունները և ծախսերը, որոնք առաջանում են այդ հանգամանքի հետ կապված, կարող են լուծում գտնել հարևանների կամ մերձակա երկրների հետ առևտուր անելու միջոցով: Այլ կերպ ասած՝ այս խմբի երկրները «դատապարտված են» տարածաշրջանային ավելի սերտ համագործակցության, քան դեպի ծով ելք ունեցող երկրները: Այս մոտեցումը պետք է դառնա տնտեսական համագործակցության և միասնացման մեկնակետը այդպիսի երկրների, նաև Հայաստանի Հանրապետության համար, քանի որ վերջինիս դեպքում (ՀՀ-ն ունի 4 հարևան երկիր) ավելանում է երկու հարևանների հետ փակ սահմանների պարագան, հետևաբար՝ դժվարանում է ոչ միայն տարածաշրջանային տնտեսական համագործակցությունը, այլև սահմանափակվում են հանրապետության զարգացման հնարավորություններն արտաքին աշխարհի հետ հաղորդակցության ուղիների կարողությունների սահմանափակության և փոխադրման ծառայությունների թանկության պատճառով: Այլ կերպ ասած՝ դեպի ծով ելք չունեցող երկրներն ամենից ավելի պետք է շահագրգռված լինեն տարածաշրջանային, նախևառաջ հարևան երկրների հետ համագործակցության ընդլայնման գործում:

Այս պարագայում ակնհայտ է, որ, Հայաստանի Հանրապետության տնտեսությունում տեղի ունեցած մի շարք դրական փոփոխություններին զուգահեռ, արտաքին առևտուրը հարևան երկրների հետ դեռևս կրում է հնարավորությունների ոչ լրիվ օգտագործման բնույթ: Սա կառուցվածքային հիմնախնդիր է, որը կարելի է որակել որպես Թուրքիայի և Ադրբեջանի հետ փակ սահմաններ ունենալու տնտեսական գին:

АШОТ МАРКОСЯН
Заместитель начальника департамента по управлению государственным имуществом при Правительстве Республики Армения, доктор экономических наук, профессор

БОРИС АВАГЯН
Финансовый аналитик в ООО „Орбита", кандидат экономических наук

Перспективы развития экономик стран, не имеющих выхода к морю.- В условиях развития интеграции и открытости национальных экономик все более усиливается роль и значение внешних рынков. Результаты экспортно-импортных операций товаров и услуг значительно влияют на величину текущего счета платежного баланса страны. Следовательно, географическое положение страны все еще остается предопределяющим фактором ее развития, а пути коммуникаций и транспортная инфраструктура, связывающие страну с внешним рынком, влияют на масштабы внешнеэкономической деятельности и ее структуру.

Страны, не имеющие выхода к морю (в том числе и Республика Армения) часто выделяются исследователями в отдельную группу. Хотя 10 декабря 1982 года ООН приняла Конвенцию по морскому праву, страны, не имеющие выхода к морю, все еще испытывают большие трудности в деле интеграции в международные рынки. С целью выявления общих закономерностей авторы исследуют основные экономические показатели стран не имеющих выхода к морю. Данные показатели приведены в сравнении с общемировыми, а также с показателями стран ОЭСР и стран, дифференцированных по уровню доходов на душу населения. Одним из важных выводов авторы считают то, что страны не имеющие выхода к морю могут и должны использовать резервы торговли с соседними и географически близкими странами.

ASHOT MARKOSYAN
Deputy Head of State Property Management Department by the Government of the Republic of Armenia, doctor of Economics, professor

BORIS AVAGYAN
Financial analyst in „Orbita" Ltd., PhD in Economics

Trends of Economic Development in Landlocked Countries.- The role and importance of foreign markets increase in the world of growing international economic integration and more open national markets. Export and import transactions of products (services) have drastic effect on the volume of running

accounts of countries' balance of payments. Thereby, geographical position remains a significant factor for the development of countries. From this point of view the volumes and ratio of foreign economic activities are determined by communication routes and transportation infrastructures to international market.

There is a group of countries which do not have access to sea - landlocked countries (including the Republic of Armenia). These countries still face the challenges of communication with international markets, though the UN passed a **Convention On the Law of the Sea** (**UNCLOS**) on December 10, 1982. For that purpose, the main economic indicators describing economies which do not have access to sea were analyzed and compared with those groups of countries sorted by income, OECD countries and the world, and corresponding conclusions were made. The most important conclusion is that landlocked countries may compensate their additional problems and expenses resulting from this fact by trading with their neighbors.